Նոտարական ակտի կոդ: 545-20171225-37-2082549
Նոտարական ակտի գաղտնագիր: FOQ2C8

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար տասնյոթ թվականի դեկտեմբերի քսանհինգին

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան

Մենք՝ քաղ. **Վաղինակ Աշոտի Հովհաննիսյանս**, ծնված՝ 24.06.1977թ., նույնականացման քարտ՝ 001284322, տրված՝ 07.03.2014թ., 066-ի կողմից,հաշվառված՝ ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Սունդուկյան 8 տուն, հետագայում՝ Վարձատու և **<<ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ** /գրանցման համար 286,180,04820, հիմնադրման տարին՝ 2003թ., ՀՎՀՀ՝ 02507171/, ի դեմս լիազորված անձ՝ Անուշ Ժորայի Վերանյանի, ծնված՝ 17.078.1977թ., նույնականացման քարտ՝ 005418017, տրված՝ 02.06.2014թ., 027-ի կողմից, հաշվառված՝ Արարատի մարզ, ք. Արտաշատ , Մարքսի 10-6 , հետագայում՝ Վարձակալ, կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն համապատասխան վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնում 1.2. կետում նշված գույքը, որը օգտագործվելու է նպատակային նշանակությանը համապատասխան:

1.2. Վարձատուն Վարձակալին է հանձնում Լոռու մարզ համայնք Վանաձոր ք. Ուսանողական 10/1-1 տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը: Ամբողջ անշարժ գույքը բաղկացած է 261,58քմ. հասարակական սեփականություն հանդիսացող մակերեսից, այսուհետև՝ <Գույք>:

1.3. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին (վկայական N 21072017-01-0205 տրված 21.07.2017թ., գաղտնաբառ՝ YX9TZAAUFAHH) և Գրավ է դրված Հայէկոնոմբանկ ԲԲԸ-ում, որը հաստատված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մարզային ստորաբաժանման գրասենյակի կողմից 14.12.2017 թվականին տրված N ՄՏ-14122017-06-0400, գաղտնաբառ՝ Q8DY4CAWKSK5 միասնական տեղեկանքով: Շինության ծածկագիրը՝ 06-0010-0718-0001-018-037: Համաձայն ՝ 15.12.2017թ-ին ՀՀ ԿԱ Անշարժ Գույքի Կադաստրի Պետական կոմիտեի գույքի առանձին որակավորման քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ թիվ ԱՏ-14/12/2017-34-0035 տեղեկանքի, Լոռու մարզ համայնք Վանաձոր ք. Ուսանողական 10/1-1 տարածքի նկատմամբ 15/11/2011թ. Թիվ BS11-11/03 գրավի պայմանագրով կիրառված արգելանքը հանվել է , գրավի պետական գրանցումը ճանաչվել է ուժը կորցրած /գրավի վկայական թիվ 0065684/:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.ՎԱՐՁԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.1.1. ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.

2.1.2.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

2.2.ՎԱՐՁԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1.Գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան վիճակում.

2.2.2. Գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող

փաստաթղթերով

2.2.3.ՎԱՐՁԱԿԱԼԻՆ նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (Գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

3. ՎԱՐՁԱԿԱԼԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է `

3.1.1 Ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված վճարը (վարձավճարը).

3.1.2Պայմանագիրը դադարելու դեպքում ՎԱՐՁԱՏՈՒԻՆ վերադարձնել Գույքն իր կողմից ստացած վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը.

4.ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

4.1.Վարձավճարի չափը կազմում է ամսական՝ 270.000 /երկու հարյուր յոթանասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, ներառյալ բոլոր հարկերը:

4.2 ՎԱՐՁԱԿԱԼԸ վարձավճարը վճարելու է յուրաքանչյուր ամսվան հաջորդող 15-րդ օրը:

4.3Սույն պայմանագրով վարձատուի համար առաջացած բոլոր կոմունալ վճարները՝ հոսանքի, հեռախոսի գազի, աղբահանության, ջրի կատարվելու են ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից:

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրը գործում է 01.01.2018 թվականից մինչև 01.01.2021 թվականը :

6. ԱՆՀԱՂԹԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են ՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զանգվածային անկարգությունները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին :

7.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

7.1. Կողմերի կողմից պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել երկկողմ համաձայնությամբ այդ մասին 1/ մեկ/ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

8.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված են նոտարական կարգով:

9.2.Սույն պայմանագրի նոտարական վավերացման պետական տուրքի վճարումը կատարվում է Վարձատուի կողմից:

9.3.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.4.Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում՝ 30 (երեսուն) աշխատանքային օրյա ժամկետում:

9.5.Կողմերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության , խաբեության, կամ սպառնալիքի ազդեցության տակ չեն կնքվում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին:

Վարձատու

Վարձակալի լիազորված անձ՝

Երկու հազար տասնյոթ թվականի դեկտեմբերի քսանհինգին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար՝ Ատոմ Հայրապետյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը,նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:ՀՀ Քաղ. օ-րի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում նոտարական վավերացման պահից սկսած 30 օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյանում N 34288

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ատոմ Գրիգորիի Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «16» Հունվարի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԻՄՆԱՐԿ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Ուսանողական փողոց 10/1-1 Տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 25/12/2017թ. սեղ. 34288

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ESTATE CADASTRE

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	**06-001-0718-0001-018-037**	**Տարածք**	**261.58 ք.մ.**	**ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Տարածքի վարձակալության ժամկետը մինչև 01/01/2021թ.

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Վոլոդյա Հազոյան

զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ESTATE CADASTRE

Նոտարական ակտի կոդ: 545-20180319-117-2335525
Նոտարական ակտի գաղտնագիր: QZ6NS3

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
Երկու հազար տասնութ թվականի մարտի տասիններին
ք.Երևան

Մենք՝ քաղ. Վաղինսկ Սշոտի Հովհանիսյանս,ծնվ.24.06.1977թ., /նույնականացման քարտ 001284322 տրված 07.03.2014թ., 066-ի կողմից, հաշվառվածՀՀ Լոռու մարզ,Վանաձոր,Սուդուկյան 8 տուն, հետագայում՝ Վարձատու և <<ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմ>> պետական կատավարչական հիմնարկ /վկայական 01Բ1071725 տրված 18.07.2016թ., գրանցման համար 222.180.921725/, ի դեմս լիազորված անձ՝ Անուշ Ժորայի Վերանյանի, ծնվ.17.08.1977թ., նույնականացման քարտ՝ 005418017, տրված 02.06,2014թ., 027-ի կողմից, հետագայում՝ Վարձակալ, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին:
Կողմերի միջև 25.12.2017թ. թիվ 34288 գրանցամատյանով Կենտրոն նոտարական տարածքում վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ լրացումները

1.Պայմանագրի 2 կետը լրացնելնոր 2.2.4՝հետևայլ խմբագրությամբ .

2.2.4.ՎԱՐՁԱՏՈՒԻՑ ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով գանձվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Սույն կետով սահմանված տուգանքները և տույժերը հաշվարկվում և հաշվանցվում են ՎԱՐՁԱՏՈՒԻՆ վճարման ենթակա գումարների հետ:
2.Պայմանագրի 4 կետը լրացնել նոր 4.2 կետով.
4.2 Եթե պայմանագրով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը ՎԱՐՁԱԿԱԼԸ ՎԱՐՁԱՏՈՒԻՆ է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա¬գրությունը:

2.Պայմանագրի 9 կետըլրացնել նոր 9.6 և 9.7 կետերով .

9.6. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, ՎԱՐՁԱՏՈՒՆ ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո ՎԱՐՁԱԿԱԼԸ իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, ՎԱՐՁԱԿԱԼԸ չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով ՎԱՐՁԱՏՈՒԻ համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով ՎԱՐՁԱԿԱԼԻ կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.7.Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Կողմ 1՝

Կողմ 2՝ լիազորված անձ

երկու հազար տասնութ թվականի մարտի տասնիններ սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Ատոմ Գրիգորիի Հայրապետյանիս կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ քաղաքացու կողմից: Համաձայնագիրը ստորագրած անձի /անձանց/ ինքնությունը, գործունակությունը ինչպես նաև /իրավաբանական անձ/անձանց/ իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են: Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում նոտարական վավերացման պահից սկսած 30 օրվա ընթացքում :

Գրանցված է գրանցամատյանում N 5671

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար վեց հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ատոմ Գրիգորիի Հայրապետյան

Նոտարական ակտի կոդ: 545-20180504-117-2482593
Նոտարական ակտի գաղտնագիր: 8KMRT7

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Երկու հազար տասնութ թվականի մայիսի չորսին

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան

Մենք՝ քաղ. **Վաղինակ Աշոտի Հովհաննիսյանը,** ծնվ.24.06.1977թթ., նույնականացման քարտ՝ 001284322, տրված 07.03.2014թ.,066-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Սունդուկյան 8,, որի անունից լիազորագրով հանդես է գալիս **ԳԵՐԱՍԻՄ ԳԵՂԱՄԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆՆ**, ծնված՝ 02/09/1961թ-ին, ՀԾՀ՝ 1209610124, անձնագիր՝ AN0453248, տրված՝ 066-ի կողմից, 25/04/2013թ-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՍՏԵՓԱՆՅԱՆ 1 ՆՐԲ., 1 Տ հետագայում՝ <Կողմ 1> և **<<ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմ>>** պետական կառավարչական հիմնարկ /վկայական 01Բ1071725 տրված 18.07.2016թ., գրանցման համար 222.180.921725/, ի դեմս լիազորված անձ՝ Անուշ Ժորայի Վերանյանի, ծնվ.17.08.1977թ., նույնականացման քարտ՝ 005418017, տրված 02.06,2014թ., 027-ի կողմից, հետագայում՝ <Կողմ 2> կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Կողմերի միջև 25.12.2017թ. թիվ 34288 գրանցամատյանով Կենտրոն նոտարական տարածքում վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

Պայմանագրի 4.2 կետը խմբագրել նոր շարադրությամբ.

<Մատուցված ծառայությունն ընդունվում է Վարձակալի և Վարձատուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսվում է Վարձակալի և Վարձատուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Վարձակալին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Վարձակալին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Վարձակալը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վարձատուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

Եթե 10 աշխատանքային օրվա ընթացքում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և սահմանված վերջնաժամկետին (10 աշխատանքային օրվան) հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված

հանձնման-ընդունման արձանագրությունը>:

Պայմանագրի 5.1 կետը լրացնել նոր պարբերությամբ.

<Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: Ընդ որում Վարձատուի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում>:

Պայմանագրի 9 կետը լրացնել նոր 9.8 կետով.

<Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի <Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ> բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից>:

Կողմ 1՝ լիազորված անձ՝

Կողմ 2՝

Երկու հազար տասնութ թվականի մայիսի չորսին սույն համաձայնագիրը վավերացված է իմ ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Ատոմ Գրիգորիի Հայրապետյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: ՀՀ Քաղ-օր-ի 301 հոդվածի համաձայն,սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում նոտարական վավերացման պահից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում:Ստորագրողների ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան N 9082

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար վեց հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ատոմ Գրիգորիի Հայրապետյան